Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների ,ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում :

Հաստատություն՝Հ Հ Արարատի մարզի Մասիս համայնքի ,Մասիս քաղաքի, թիվ 5 մսուր/մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Արմինե Քամալյան

Ղեկավար՝Ավետիսյան Ժաննա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....3

Գլուխ 1.ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ և ԾԵՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……....4

Գլուխ 2 Երեխայի ազգային մտածելակերպի ձևավորմանն ուղղված հանդեսներ և տոնակատարություններ :……12

Եզրակացություն……21

Օգտագործված գրականության ցանկ……..22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության ժամանակակիվ տեսության համաձայն ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում առանձնահատուկ կարևորում են հետևյալ գործոնները

Ազգային պատկանելիության գիտակցումն ու էթնիկական սոցիալականացումը ;Նշված գործոնների փոխազդեցության արդյունքում երեխայի մեջ ձևավորվում են ազգային հատկություններ,ազգային վարքագծին բնորոշ ուրվագծեր;

Այսօր նախադպրոցականի բարոյական դաստիարակության համակարգում շեշտակի ուշադրություն է դարձվում ազգային և հայրենասիրական հիմնախնդիրներին ;

Նախադպրոցականներ զարգացմանն ու դաստիարակությանը նվիրված ուսումնասիրությունները ,ինչպես նաև նախադպրոցական հաստատությունների մանկավարժական գործընթացում իրականացվող համապատասխան աշխատանքները թույլ են տալիս եզրակացնել ,որ այդ տարիքի երեխաների ազգային մտածելակերպի ձևավորման արդյունվետության միջոցներից են հատուկ կազմակերպված պարապմունքները,սյուժետային խաղերը,հատուկ մշակված թեմատիկ զրույցները,մակական գեղարվեստական գրականության բոցվանդակային առումով համապատասխան ստեղծագործությունները,ագային արվեստի նմուշները,ազգային տոներին նվիրված հանդեսները,տոնոկոտարությունները;

Առաջին գլխում անդրադարձել ենք տոներին և ծեսերին `ինչ են իրենցից ներկայացնում տոները և ծեսերը,ինչ կարող ենք սովորել տոների և ծեսերի միջոցով :

Մանրամասն երկայացրել ենք տոների և ծեսերի իմաստը դերն ու նշանակությունը :

Երկրորդ գլխում նրկայացրել ենք ծեսերի և տոների գործնական մասը:

Գլուխ 1.ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ և ԾԵՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տոներ

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել:Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ,որ ժամանակի կրոնաքաղաքային փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա:Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ օրս էլ ,աչքի է ընկնում իր բազմաթիվ յուրօրինակ ազգային տոներով :Մենք բոլորս այս տոները նշում ենք ,որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ,սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեականա ժամանակներից :Այստեղ փորձել ենք առանձնացնել մի քանի ազգային տոներ , որոնք ե:րկար ճաանապարհ են անցել հեթանոսությունից մինչև քրիստոնեություն :

Ծես

Մշակույթը չէր պահպանվի ,և սերնդեսերունդ չէր փոխանցվի ,եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ ,որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական ,կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն ,որին հավատացյալները վերագրում են մոգական նխորհրդավոր հատկություններ :

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ ,որոնցից են Նոր տարին ,Սուրբ ծնունդ,Տեառնընդառաջը,Բարեկենդանը,

Ծաղկազարդը,Զատիկը,Համբարձումը,Վարդավառը: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը ,որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսերը՝ ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները:

Հայտնի են շատ ծիսական երգեր ու խաղեր՝<<Ծիվ-ծիվ>>,

<<Կռնաբռնուկի>> (Պարան ձգել),<<Մի ոտանի սև սատանա>> ,<<Աղջիկ փախցնոցի>>,<<Աքլորակռիվ>>, և <<Գնդակախաղ>> և այլն:

Ծիսական խաղեր

Աքլորակռիվ

Աջ ձեռքով մեջքի կողմից բռնում են ծալված ձախ ոտքը և թռչկոտելով աջ ոտքի վրա՝ուսով այնքան են իրար թեթևակի խփում մինչև խաղացողներից մեկը վայր է ընկնում,պարտվում:

Գոմշակռիվ

Խաղացողները չորեքթաթ իրար հրում են ուսերով :Նույնը կատարում են կանգնած:Խաղում են կատակով՝աշխատելով չպարտվել :

Աղջիկ փախցնոցի

Երեխաները զույգերով իրար հետևից կանգնում են՝զույգերի ձեռքերն վերև պահած՝ ափերը իրար մեջ:Նրանցից մեկը ,ով զույգ չունի ,գալիս է առաջ ու նրանց արանքով անցնելով ,բռնում է որևէ մեկի ձեռքից ,երկուսով գնում են ,կանգնում վերջում ,իսկ այն մասնակիցը ,ում զույգին տանում են,գալիս է առաջ ու կատարում նույն գործողությունը:

Պարան ձգոցի

Խաղում են երկու խմբով :Խմբերը բաժանվում են հավասար քանակի :Պարանը պահում են ձգած և նախապես թիմերի բաժանված խմբերից մեկը կանգնում է աջ,իսկ մյուսը ձախ մասում:Հրահանգավորումնից հետո սկսկում են քաշքշել պարանը,որ խումբը մինչև վերջ կարողանա ձգել դեպի իրեն պարանի մեծ մասը ,մասնակիցներով հանդերձ ,նա հաղթող է ճանաչվում:

Գնդակախաղ

Այս խաղը անցկացնում ենք ֆիզիկական դաստիարակության պարապմունքին :Բաժանվում են երկու խմբի և ամեն մի խումբ ունենում է մի գնդակ ,կատարում է տարբեր առաջադրանքներ խաղը վարողի կողմից ,ով որ առաջինն է վերջացնում առաջադրանքը ,նա էլ հաղթող է համարվում:

Ամանոր

Հայերը տարբեր ժամանակաշրջանում ամանորին տվել են տարբեր անվանումներ՝ Նոր տարի,Նավասարդ,Տարին գլուխ ,Տարեմուտ ,Կաղանդ:Ամանորով նշանավորվում է տարեսկիզբը :Տարին այն ժամանակաշրջանն է ,որի ընթացքում երկիր մոլորակը կատարում է մի լրիվ պտույտ արեգակի շուրջ:

Չնայած տարի հասկացությունը ծնվել է Հին եգիպտոսում՝ տարբեր ժողովուրդներ տարբեր ամիսներ են համարել տարվա առաջին ամիսը և տարբեր է եղել նրանց նոր տարին:

Ամանորը հայերը նշում էին տարվա առաջին ամսին `Օգոստոսին և այն կոչվում էր Նվասարդ:Այս տոնը հայկական դիցարանում նոր տարին անձնավորող<<Նոր պտուղների ամենաբեր >> համարվող տոն էր:

Նման բազմազանությունը ժողովուրդների տնտեսական և կուլտուրական փոխհարաբերություններում դժվարություններ էր առաջացնում:Այսպիսով ,որոշվեց նոր տարվա սկիզբը համարվել Հունվարի 1-ը :Հենց այդ բանն էլ բանն էլ դրվեց մեր ներկա օրացույցի հիմքում:Չնայած Հունվարի 1-ը ընդունված է նոր տարին ,բայց կան դեռ երկրներ ,որոնք պահպանում են իրենց ավանդույթները և նոր տարին նշում իրենց ավանդական օրերին:

Ամանորին մեզ մոտ պատրաստվում են շատ մանրակրկիտ հավատարիմ մնալով դարերից եկող հատուկ ավանդույթներին:

Ամանորի տոնակատարության ավանդական ծեսերը անընդհատ փոփոխվում են:Այսինքն ,չի կարելի ասել ,թե ամեն տարի դրանք նույնն էին ,ավելին ամեն ժամանակաշրջան առաձնացնում էր իր հատուկ ամանորյա միջոցառումներով:

Մարզերի մեծ մասում թխվածք էին պատրաստում մարդու տեսքով ,որը կոչվում էր <<Ասիլ- Բասիլ>> կամ <<Վասիլ>>:

Ձեռքերի ,աչքերի ու բերանի հատվածում դնում էին չամիչ :

Եթե թխելու ժամանակ չամիչը ուռում էր ,դա լավ նշան էր ,որը խորհրդանշում էր հաջող տարի ,եթե չորոնում էր ապա ոչ մի լավ բանի չարժե սպասել :Հնուց ի վեր հայերը եղևնու փոխարեն Ամանորին զարդարել են ձիթապտղի ծառը,ընդ որում զարդերը եղել են բնության պարգևներ և բացարձակապես բնական:Նոր տարվա երեկոյան ձիթենու համեմատաբար հաստ ճյուղը խրել են նախապես թխված մեծ հացի կամ բաղարջի մեջ:

Այդ ճյուղը կաղանդի ծառ է կոչվում:Տան անդամները նախ ընկուզեղենով զարդարում էին ճյուղը,այնուհետև տան տերը ճյուղը տանում էր եկեղեցի ,քահանային օրհնել տալիս ,հետ բերում տուն և ամրացնում գերանին :

Տոնածառի խաղալիքները հասկերից,ընկույզներից (թվով՝ 7)

պատրաստված զարդարանք էին ,որոնց վրա կախվում էին մարդակերպ և կենդանակերպ թխվածքներ:Զարդարում էին մրգերով,չրերով, փոքրիկ քսակներով ՝ որպես առատության ու լիության խորհրդանիշ:Հին ժամանակներում Ամանորի գիշերը ,երբ հավաքվում են երեխաները ,սկսում են մամիկից չիր ու չամիչ ուզել:

Ո՞վ է Կաղանդ պապը

Հայկական արձանագրություններում Զմեռ պապի անունը շատ հաճախ հիշատակվում է իբրև Կաղանդ պապիկ:Կաղանդ պապը ազգային արժեքները ,ծիսական համակարգը պահպանող ու սերունդներին փոխանցող կերպար է:Կաղանդ պապին ուղեկցում էր խլվլիկը:Կաղանդ պապը ոչ թե նվերներ ,այլ ամառրի յոթ խորհուրդ է տվել ՝փոխադարձ հարգանք,խաղաղություն

,ազնվություն,իմաստություն ,աշխատասիրություն,համեստություն և գոհունակություն:Խորհրդանշական էր,Ամանորի նախաշեմին թխվող գաթայի մեջ

կոպեկ դնելը :Գաթաները բաժանելուց հետո ,ով կգտներ կոպեկը իր բաժնի մեջ համարվում էր ,գալիք տարվա հաջողակը:

Տեառնընդառաջ

Տեառնընդառաջը (Տըրնդեզ,Տանդառեզ,տառինջ-տառինջ)և այլն:Հայ առաքելական եկեղեցու անշարժ տոներց է և նշվում է փետրվարի 13 և 14 –ին ՝Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոներից 40 օր հետո:

Ըստ եկեղեցական ավանդության ,երբ Հիսուսին բերում են տաճար,դրա արևելյան կողմի դռները ,որոնք նախկինում չէին բացվել ,ուժեղ դղրդյունով բացվում են և մարդիկ իրենց ճրագներով դուրս են գալիս տներից՝ տեսնելու համար թե ինչու է այդպիսի աղմուկ բարձրացել :

Նրանք ակամայից իրենց ճրագներով լուսավորում ե ն Հիսուսի ճանապարհը դեպի տաճար:Այստեղից էլ առաջացել է <<Տեառընդառաջ>> անվանումը,որը նշանակում է

Տիրոջն ընդառաջ:Տեառընդառաջի ծիսական արարողակարգն սկսվում է փետրվարի 13-ի երեկոյան ,եկեղեցական օրացույցի համաձայն՝երեկոյան ժամերգությունից հետո փոխվում է օրը ,և փետրվարի 14-ին սկսվում է փետրվարի 13-ի երեկոյից:

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարի՝Քրիստոսի ծննդից 40 օր հետո նշում է Տյառընդառաջը:Տյառընդառաջի տոնը համարվում է Տիրոջն ընդառաջելու հրավեր բոլորի համար:

Հնում տրնդեզը կրակին նվիրված տոն է եղել:Ըստ հին հայկական պատկերացումների տնդեզի վառվող կրակի բոցերն ավելի էին ջերմացնում արևին և այդպիսով մեղմում էին ցուրտը և արագացնում գարնան գալուստը:Քանի որ ,հայերն իրենց անվանում էին արևի որդիներ ,նրանք պաշտում էին նաև արևի երկրային տեսակը՝կրակը:

Տոնի ժամանակ կրակի վրայով թռչելով՝մեր նախնիները հաղորդակցվել են բնության տարրերի հետ:Ըստ որոշ մեկնաբանությունների՝տրրնդեզ բառը նշանակում է դիզված կրակ:

Տրրնդեզի կրակը վառել են հիմնականում ցորենի հասկերից:Կրակի վառվելու ընթացքում կանայք սկուտեղի վրա բերում էին Տեառնընդառաջ տոնական կերակրատեսակները՝փոխինձը ,չամիչը,աղանձը,ընկույզը, բոված սիսեռը և պտտեցնում կրակի շուրջ ,իսկ դրա որոշ մասը շաղ տալիս կրակի վրա:Այսուհետև երբ կրակի բոցն արդեն թուլանում էր,սկսում էին թռչել կրակի վրայով:Եթե կրակի վրայից թռչելիս փեշը անզգուշությամբ վառվում էր ,դա համարվում էր հաջողության նշան:

Ծաղկազարդ

Ծաղկազարդը (ծառզարդար,ծառկոտրուկ) գարնանային բացօթյան տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն է:

Սուրբ զատիկից մեկ շաբաթ առաջ Հայ Առաքելական եկեղեցին տոնում է Ծաղկազարդը՝Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ:

Ծաղկազարդի առավոտյան եկեղեցում օրհնում են ձիթենու կամ ուռենու ոստերը և բաժանում ժողովրդին:ՈՒռենու ոստերը ,որոնք անպտուղ են խորհրդանշում են `հեթանոսներին ,որոնք պտղաբերեցին միայն Քրիստոսին ընծայվելուց հետո:Ոստերի փափկությունը խորհրդանշում է Քրստոսին հետևողների խոնարհությունը:Ծաղկազարդի օրը Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հռչակված է ,որպես մանուկների օրհնության օր ,քանի որ Տիրոջ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին ասելով՝<<Օրհնությու՛ն,Դավթի որդուն>>:

Զատիկ

Զատիկը թե Հին,և թե Նոր համարվում է մեծագույն տոներից մեկը,այն Քրիստոսի հարության տոնն է:

Զատիկը նշանակում է զատում,բաժանում,հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված:Սուրբ Զատիկ տոնը անավանում են նաև << Հրաշափառ հարության տոն>>,<<Լուսավոր զատկի տոն>>, և այդ օրը ,ինչպես մյուս տոներին , մարդիկ շնորհավորում են միմյանց ` ասելով <<Քրիստոս  հայրավ ի մեռելոց>>, և պատասխանում  `<<Օրհնյալ է հարությունը Քրիտոսի>>:

Այս տոնն ունի նաև իր ավանդույթները :Դրանցից ամենագլխավորը ձու ներկելու արարողությունն է:Ձուն համարվում է հարության և նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշ ,կարմիր գույնն խորհրդանշում է,խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը:Հայաստանում Զատիկի սեղանին լինում են եփած ձուկ ,չամիչով փլավ և գինի :Չամիչով փլավը մեկնաբանվում է ,որպես ողջ մարդկության խորհրդանիշ ,որտեղ չամիչը՝ հավատացյալներն են ,գինին ` Հիսուսի արյունը:Իսկ ամենասիրելի ավանդույթներից մեկն էլ,ձվակռիվ խաղալն է:

Համբարձում

Համբարձման մասնակիցները բաժանվում են տուն այցելող և տանտերերի խմբերի:Տուն այցելող խումբը երգելով մոտենում է տանտերերի խմբերից մեկին

:Երգելով ու պարելով բեմադրում են համբարձման ծեսը,բայց ամենահոտաքրքիրը համբարձման ծեսում վիճակ խաղն է,մի տարրայի մեջ պահում են նմուշներ,գրում են բարեմաղթանքներ թղթի վրա և յուրաքանչյուրի նմուշիդուրս գալուն հետ նվիրում են բարեմաղթանք :Մասնակիցները ոգևորվում են այդ բարեմաղթանքների խոսքերից;

Վարդավառ

Վարդավառ կամ վարդեվառ,հայ ժողովրդական նախաքրիստոնեական տոն ,ըստ եկեղեցական տոնացույցի նշվում է Զատկից 14 շաբաթ կամ 98 օր հետո,Կիրակի:Գրիգոր Լուսավորիչը փոխել է Հիսուս Քրիստոսի այլակերպության տոնով:Վարդավառը կամ Քրիստոսի Պայծառակերպությունը ,Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից է:Տոնը նշվում է Սուրբ Զատիկից 98 օր հետո՝հունիս 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:Տոնի պատմությունը գալիս է դեռևս հեթանոսական ժամանակներից:Հնում վարդավառի տոնը կապում էին հայկական դիցաբանության ջրի,սիրո,պտղաբերության ու գեղեցկության աստվածուհի Աստղիկի հետ:Վարդավառի տոնը նշվում էր, ժողովրդական մեծ հանդիսություններով:

Վարդավառը հայկական ավանդական տոների շարքում ամենասիրելիներից մեկն է ,ամառային ամենասիրված տոնը:

Քաղաքներում վարդավառն ավելի շատ համարվում է մանկական տոն,երեխաները հենց այդպես ել ասում են՝<<ջրոցի խաղալ>> կամ <<վարդավառ խաղալ>> այսինքն՝ ուրախ ջրել անծանոթներին և անցորդներին:

Գլուխ 2. Երեխայի ազգային մտածելակերպի ձևավորմանն ուղղված հանդեսներն և տոնակատարություններ :

Գործնական մաս

Երեխայի աշխարհընկալման ,ազգային մտածելակերպի ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները,ընտանեկան հանդիսությունները,տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները:Այդ միջոցառումներից ստացած տպավորությունները որոխայի մտածելակերպում աստիճանաբար իմաստավորվում են և դառնում տարրական գիտելիքներ՝շրջապատի ճանաչողական համակարգում :

Նախադպրոցական հաստատություններում առանձնակի հետաքրքրությամբ են անցնում սուրբ ծնունդ ու ամանորը,զատիկը,համբարձման տոնը վարդավառը:Եթե սուրբ ծննդի և զատիկի տոնակատարությունները տոնում են մանկապարտեզի դահլիճում ,ապա համբարձումն ու վարդավառը կազմակերպվում են մանկապարտեզի բակում:Երեխաներին ուղեկցում ,հաճախ էլ միջոցառմանը մասնակից են դառնում ծնողները:

Նավասարդ(Նոր Տարի)

Ամեն տարի դեկտեմբերի 20-ից հետո մանկապարտեզում անցկացնում ենք ամառրյա գեղեցիկ միջոցառում :Լույսերով և զարդարանքներով ստեղծում ենք հեքիաթային միջավայր երեխաների համար:Զարդարում ենք բակում գտնվող եղևնիները ,շրջակայքը,դահլիճը, խմբասենյակները,որոնց մասնակից են դառնում երեխաները:Երեխաների տոնական տրամադրությունը պահպանում ենք ամբողջ ամսվա ընթացքում՝ երեխաների հետ միասին պատրաստում ենք բացիկներ,գեղեցիկ ամառրյա խաղալիքներ,զարդարանքներ:Կազմակերպում ենք տոնակատարություններ,հանդիսություններ նվիրված ամանորին ,որի ընթացքում երեխաները մեծ ոգևորությամբ մասնակցում են տոնահանդեսներին ,և երգելով ու պարելով դիմավորում Ձմեռ պապին և Ձյունանուշին:

Տեղեկություն խոհանոցով,խորհուրդներով,խաղերով ,երգ ու պարով:

Սուրբ Զատիկ

Մինչ Սուրբ Զատիկը մենք երեխաների հետ միասին ցանեցին ածիկ ,պատրաստեցինք տոնին համապատասխան զարդարանքներ :Կազմակերպեցինք հատուկ պարապմունքներ , որի ընթացքում ամրապնդեցինք երեխաների գիտելիքները տոնի մասին :Զատիկին նախորդող օրը գեղեցիկ զարդարում ենք սեղանները: ճաշասեղաններին դնում ենք նորածիլ ցորեն, կարմիր և այլ գույներով ներկված հավկիթներ և չամիչով հաց:

Ամեն տարի այս տոնին պատրաստվում ենք մեծ ոգևորությամբ այս տարի Ավագ խմբերը շատ գեղեցիկ ներկայացրերին տոնի խորհուրդը :

Տոնին համապատասխան հագուստ կրելով երեխաները ներկայացրեցին իրենց սովորած ոտանավորները, երգեցին ու պարեցին:

Ծաղկազարդ

Տոնից առաջ ծնողներին զգուշացնում ենք ,որ տոնի օրը երեխաներին մանկապարտեզ ուղարկեն գույնզգույն շորորով,իսկ գույների մեջ գերակշռեն կարմիրը,կանաչը և դեղինը:Տոնի նախորդ օրը փոքրերի օգնությամբ մաքրվում է մանկապարտեզի բակը ,կահավորվում են խաղասենյակները,հարդարվում խաղալիքները:Նախօրոք պատրաստված նվերներով ,տոնի օրը ,երեխաները շնորհավորում են Ծաղիկ,Ծաղկանուշ,Մանուշակ,Սոսե,Վարդուհի ,Լալա և այլ ծաղկանվանակիրներին:Տոնի առավոտյան երեխաները քաղցրավենիքներով շնորհավորում են միմյանց,ինչպես նաև դաստիարակներին ,ծնողներին ,հյուրերին:Այնուհետև երեխաները արտասանում են երգում ,պարում:

Անցկացվել ենք գեղեցիկ միջոցառում ,որտեղ երեխաները շատ գեղեցիկ և բովանդակալից ներկայացրեցին Ծաղկազարդը:

Համբարձում

Ծաղկազարդին հաջորդում է Համբարձումը:Համբարձման տոնին մանկապարտեզի դահլիճում ստեղծում ենք կանաչազարդ անկյուն,ուր երեխաների խմբերը խաղում են ժողովրդական խաղեր ,աղջիկները հյուսում են ծաղկեպսակներ :Իսկ դաստիարակը ասում է տոնին համապատասխան խոսքեր :

Հավաքվել ենք այս օջախում ,

Որ համբարձումը տոնենք

Մեր գալիք նոր օրերում

Այս հին ծեսը նորոգենք

Ուշի-ուշով մեզ հետևեք ,

Եկեք դարձեք մասնակից

Ծաղկի տոնով դուք հիացեք

Երգեք ,պարեք,սրտակից:

Այնուհետև երեխաները պարում են՝<<Վեր -վեր >>, պարը և կատարում ժողովրդական՝<<Նինո >>,երգ- պարը:Երգ-պարի ավարտից հետո բացվում է վարագույրը ,բեմ են մտնում աղջիկները՝ուսերին կժեր և տղաները ուռենու ճյուղերով:

Երեխաները արտասանում՝.

Իմ հինավուրց հայոց աշխարհ

Դու միշտ պետք է բարգավաճես

ՈՒ թշնամու աչքի առաջ

Համբարձումներ հավերժ տոնես :

Խոսքերից հետո երեխաները երգում են << Հայաստանի երգը>>,որից հետո կատարում են ազգագրական պարերի շարան :Հանդեսն ավարտվում է հետևյալ խոսքերով՝.

Երկիր Հայաստան դու հավերժ ապրիր ,

Շատ ու շատ դարեր Համբարձում տոնիր,

Հայաստան երկրով մենք հպարտանանք

Համբարձման ծեսով ազգովի սրբանանք:

Երեխաները հստակ պատկերացնում են համբարձման տոնի իմաստը,և գիտակցում դրա խորհուրդը:

Եզրակացություն

Եվ այսպես ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով դիտումներ եկանք հետևյալ եզրահանգումների՝

1. Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն տոները և ծեսերը: Ծեսերի և տոների իրականացումը մանկապարտեզում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը: Ճիշտ է, մանկահասակ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերին տոների իմաստն ու նշանակությունը, սակայն, նրանց ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով, կարելի է շատ մեծ արդյունքների հասնել:

2. Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

Օգտագործված գրականության ցանկ

1. 5-6 տարեկաններ. Դաստիարակի ուղեցույց
2. Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
3. Նախադպրոցական մանկավարժություն. ձեռնարկ

4. Նախադպրոցական մանկավարժություն-Նաիրա Գրիգորյան
5. Լ.Սմբատյան,Լ.Սարգսյան — Կերպարվեստի պարապունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում
6. Նախադպրոցական մանկավարժություն
7. Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

2. Ծեսերին առնչվող գրականություն, հոդվածներ

1. Ազգային ծեսեր, տոներ. նկարագրություն
2. Վ. Բդոյան, «Հայ ժողովրդական խաղեր»
3. Հրանուշ Խառատյան -Առաքելյան, «Հայ ժողովրդական տոները»
4. Ռ. Հարոյան, «Զատիկ»

5.Մարինե Սահակյան Նախադպրոցականի ազգային դաստիարակության հիմնահարցերը Սոֆյա Արղությանի մանկավարժական հայացքներում